

Սուրիացի եւ Եւրոպական Միութեան անդամ երկիրներու դիւանագէտներ երկ Դամասկոսի մէջ իրենց հանդիպումին աւարտին յաջողեցան համաձայնութեան մը յանգիլ, որ մօտ օրէն պաշտօնապէս պիտի յայտարարուի եւ ստորագրուի երկու կողմերու քաղաքական ղեկավարներու կողմէ:

«Սուրիա եւ Եւրոպական Միութիւն համաձայնեցան բոլոր, նոյնիսկ քաղաքական կէտերու շուրջ», յայտարարեց եւրոպական կողմի բանագնացը՝ Քրիսթիան Լէֆլոր:

Երկու կողմերը հինգ տարիէ ի վեր ձեռնարկած են համագործակցութեան բանակցութիւններու:

(ԱՖՓ)

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ ՉՈՒԻՑԵՐԻՈՅ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ



Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երկ Ժընեւի մէջ հանդիպում մը ունեցաւ Չուիցերիոյ լիքանանեան համայնքի ներկայացուցիչներուն եւ երեւելիներուն հետ: Ներկայ գտնուեցան նաեւ նախագահ Լահուտի ընկերակցող լիքանանեան պատուիրակութեան անդամները՝ նախարարներ Մարուան Համատէ, Նեժիպ Միքաթի եւ Քարիմ Բազրատունի, Չուիցերիոյ մէջ Լիքանանի դեսպան Սամիր Հըպէյքա, խմբագիրներու եւ լրագրողներու սենտիքաներու նախագահներ Մըլիհէմ Բարամ եւ Մոհամէտ Պալպէքի, ինչպէս նաեւ բարձրաստիճան անձնաւորութիւններ:

Շուրջ մէկուկէս ժամուան ընթացքին, նախագահ Լահուտ իր յայտարարութիւններուն մէջ կերպարանացաւ ապապետականացման գործընթացին վրայ:

Ան շեշտեց, որ ապապետականացման գործընթացին գծով որեւէ որոշում հարկ է, որ ծառայէ Լիքանանի պետական գանձարկղին շահերուն եւ ծառայէ Լիքանանի տնտեսական եւ էլեմտական կայունութեան:

Նախագահ Լահուտ հանդիպում մը ունեցաւ համաշխարհային դրամատէրներու եւ դրամատուններու նախագահներու հետ: Քննարկուեցան Լիքանանի եւ Միջին Արեւելքի տնտեսական իրադարձութիւններն ու վարգաւորումները: Ան շեշտեց, որ «Փարիզ-2» վեհաժողովը մեծ նպաստներ ունեցաւ Լիքանանի տնտեսական

Շար.՝ էջ 2

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ԱՆՁՆԱՄՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ. 6 ՁՈՇ, 13 ՎԻՐԱՒՈՐ



Ռուսիոյ մէջ Կիրակի օր կայացած երեսփոխանական ընտրութիւններէն երկու օր ետք, Մոսկուայի մէջ երկ տեղի ունեցած անձնասպանական գործողութիւն մը 6 զոհ եւ 13 վիրաւոր խլած է:

Մոսկուայի ոստիկանութեան համաձայն, առնուազն մէկ կին, որ պայթուցիկ նիւթերով լեցուն գօտի մը կը կրէր, ձեռնարկած է գործողութեան: Չպայթած երկրորդ սարք մը գտնուած է կնոջ մը դիակին վրայ՝ ոստիկանութեան կողմէ վայրը ապահովուելէ ետք:

Մոսկուայի քաղաքապետ Եուրի Լուժնովի համաձայն, կրնայ երկու հոգի ձեռնարկած ըլլալ գործողութեան:

Նախագահ Վլատիմիր Փութին Կրեմլինի մէջ արտասանուած խօսքի մը մէջ դատապարտած է ահաբեկչութիւնը՝ առաւօտեան տեղի ունեցած յարձակումէն ետք, սակայն ան անուղղակիօրէն ակնարկած է անձնասպանական գործողութեան, ըսելով, որ Ռուսիա առօրեայ պայքար կը մղէ ահաբեկչութեան դէմ, «ներառեալ այսօր»:

Պաշտօնատարներու համաձայն, գործողութեան հեղինակը յայտնապէս պետական Տումայի շէնքը թիրախ ունէր, նկատի ունենալով, որ անիկա դէպքին վայրէն քանի մը տասնեակ մէքը հեռաւորութեան կը գտնուի:

Շար.՝ էջ 2

Շ. Յ. Գ. ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆԿ. ՇՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԿԱՆԴԱՂԱՆԱՅ ԿՐԱՍՏԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Շ. Յ. Գ. Բիրոյի ներկայացուցիչ ընկ. Շրանդ Մարգարեան Թեհրանի «Ալիք» օրաթերթին տրուած հարցազրոյցի մը մէջ անդրադարձաւ վրաստանի քաղաքական վերջին վարգաւորումներուն:

Ընկ. Մարգարեան դիտել տուաւ, որ վրաստանի վերջին իրադարձութիւններուն նկատմամբ Հայաստան եւ հայութիւնը պէտք է մտահոգ ըլլան, որովհետեւ այդ վարգաւորումները անմիջականօրէն կ'առնչուին Հայաստանին եւ վրացահայրութեան: Միաժամանակ, դիտել տուաւ Մարգարեան, վրաստանի մէջ ստեղծուած իրավիճակը կ'ազդէ Չաւախքի հայ բնակչութեան վրայ, որ վրաստանի իշխանութիւններուն կողմէ միջոտ անտեսուած է:

«Չաւախքահայութիւնը, իր ընկերային-տնտեսական իրավիճակին հետեւանքով, ինչպէս նաեւ՝ մարդկային իրաւանց առումով կրկնակիօրէն իրաւարկուած շրջան մը ըլլալով, բնականաբար աւելի մեծ մտահոգութեամբ կը դիմագրաւէ այս բոլորը», նկատել տուած է Շրանդ Մարգարեան:

Շ. Յ. Գ. Բիրոյի ներկայացուցիչը ներկայ իրավիճակին մէջ Չաւախքի համար առաջնահերթ նկատեց Չաւախքահայութեան միասնականութեան պահպանումը: «Ամէնէն կարեւորը Չաւախքահայութիւնը իբրեւ մէկ ամբողջութիւն եւ միասնական հատուած տեսնելն է, որ հինի եւ նորի կոչը մեր կոչը չէ, այլ՝ Չաւախքի եւ Չաւախքահայութեան համար նպաստաւոր վիճակի ձեռքբերումն է», ընդգծած է Մարգարեան կոչ ուղղելով խուսափել վրաստանի ներքիշխանական հակասութիւնները Չաւախք փոխադրելէ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ ՆԱԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ

Շրանդ Մարգարեան անդրադարձած է նաեւ Հայաստանի ներքաղաքական իրավիճակին եւ շեշտած է, թէ քաղաքական եռակողմանի համա

Շար.՝ էջ 2

ՅՈՅՅԵՐ, ԱՆՁՆԱՄՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՐԲԵՐ ԲԱԽՈՒՄՆԵՐ ԻՐԱՐ ԿԸ ՅԱԶՈՐԴԵՆ ԻՐԱՔԻ ՄԷՁ

Անձնասպանական գործողութիւն մը 58 ամերիկացի զինուորներ վիրաւորեց Իրաքի հիւսիսային մէկ շրջանին մէջ, Մուսուլի մօտ, երկ արեւածագէն առաջ, յայտնեցին ամերիկեան ու տեղական զինուորական աղբիւրներ:

Ամերիկացի զինուորական բանակներ մը յայտնեց որ գործողութիւնը տեղի ունեցած է առաւօտեան ժամը 4:45ին, երբ ինքնաշարժ մը մօտեցած է ամերիկեան զորանոցին Թալ Աֆար գիւղին մօտ: Ինքնաշարժը կանգ չէ առած անցարգելին, որուն վրայ հսկող զինուորները փորձած են կանգնեցնել ինքնաշարժը, որ կանգ առած ու պայթած է զօրանոցին մուտքին: Բանբերը ասելուց, որ վիրաւորներուն մէջ մասը ապակիի բեկորներով վիրաւորուած է: Բանբերը չըսաւ թէ քանի ամերիկացիներ կը գտնուին զօրանոցին մէջ եւ թէ ինչ է անոնց պարտականութիւնը հոն: Թալ Աֆարի բնակչութիւնը մեծամասնութեամբ շիի

թուրքմէներ են: Այս շրջանին մէջ ցարդ զինեալ որեւէ դէպք չէր պատահած: Մայրաքաղաք Պաղտատի մէջ ալ սպանուեցան երեք իսլամներ եւ երկու ուրիշներ վիրաւորուեցան մկկիթի մը մէջ, ուր պայթում մը տեղի ունեցաւ, յայտնեց ոստիկանութիւնը: Բանբեր մը ըսաւ, որ ականը վետեղուած էր մկկիթին բակին մէջ: Ռուսները պայթած էր արեւածագի աղօթքի պահուն, ահ ու սարսափի մատնելով հաւատացեալները:

Ֆալուժայի մէջ ալ ականատեսներ յայտնեցին, որ ամերիկեան ուղղաթիռ մը ջախջախուած է: Անոնցմէ մէկը ըսաւ, որ լսած է զօրաւոր պայթում մը, որմէ ետք ուղղաթիռը ջախջախուած է: Քստականատեսին ուղղաթիռին մէկ բաժինը կ'այրէր: Ամերիկացի բանբեր մը յայտնեց, որ ուղղաթիռ մը խանգարում ունենալով ստիպողական էջք կատարած է Ֆալուժայի մօտ: Բանբերը ալ մանրամասնութիւններ չտուաւ:

Միւս կողմէ, հարիւրաւոր շիիներ երկ ցոյցի մը մասնակցեցան Պաղտատի մէջ, բողոքելու համար շէյխ Ապտէլ Ռապալ Լամի մահուան դէմ: Լամի մահացած էր շաբաթավերջին, երբ ամերիկեան հրասայլ մը անցած էր ինքնաշարժին ու իր վրայէն: Լամիի եղբայրը ըսաւ, որ շէյխը ինքնաշարժէն դուրս ելած էր ձամբուն եզերքը՝ սպասելով որ մէկը վառելիքի թերէ ինքնաշարժին: Ամերիկեան հրասայլ մը հեռուէն գալով՝ ձգած է շիի կրօնաւորը, ու նոյն պահուն մահացած է: Եղբայրը կ'ըսէ, որ զինուորներ

ը նոյնիսկ կանգ չեն առած նայելու թէ ի՞նչ պատահած է: Միջադէպը տեղի ունեցած է Սատր քաղաքին մէջ: Լամիի եղբայրը հարց տուաւ, որ հրասայլերը ի՞նչ գործ ունին այդ նեղ փողոցներուն մէջ:

Ամերիկեան աղբիւրներ հաստատած էին, որ արկած մը պատահած է եւ թէ անոր մասին հետաքննութիւն կը կատարուի:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ արտաքին գործոց նախարարները դատապարտեցին վայրագութեան ալիքին սասուկացումը Իրաքի մէջ:

(ԱՖՓ)

ԱՃԱՐԻԱ ՍՈՒՑՔԻ ԱՐՏՕՆԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄԻՆ ԳԾՈՎ

ԹԻՖԼԻՍ ԿԸ ԴԱՏԱՊՐՏԵ ՄՈՍԿՈՒԱՆ

ԹԻՖԼԻՍ, 8 (ԱՖՓ).- Թիֆլիս երեքշաբթի օր դատապարտած է Մոսկուայի «միակողմանի» որոշումը՝ մեղմացնելու վրաստանի կէս ինքնավար Աճարիոյ շրջանին համար մուտքի սահմանափակումները, ըսելով, թէ անիկա հանրապետութեան ներքին հարցերուն միջամտութիւն է:

Վրաստանի արտաքին գործոց փոխ նախարար Քախա Սիխարուլիժէ ըսած է, որ միջոցառումը անընդունելի է եւ թէ ռուսական կողմը որոշում կայացուցած է առանց խորհրդակցելու վրաստանի արտաքին գործոց նախարարութեան հետ:

Խորհրդարանի առժամեայ նախագահ Յերեթիլի նաեւ դատապարտած է մուտքի արտօնագիրներու վերաբերեալ քայլը, մինչ Մոսկուայ թափ կու տայ վրաստանի մէջ անջատողական շրջաններուն հետ իր կապերուն: Ըտուարտ Շեւարտնաձէի իշխանութեան հետեւանալ է ի վեր:

Իսկ Միխայիլ Սաքաքաձիլի, որ գլխաւորած էր բողոքի այն ցոյցերը, որոնք պարտադրած էին Շեւարտնաձէի, որ հրաժարի եւ որ շատ հաւանաբար Յունուար 4ի նախագահական ընտրութիւններէն յաղթական դուրս պիտի գայ, քայլը «ոչ բարեկամական արարք մը» կոչած է:

«Ապագային ոչ մէկը պիտի յանդգնէ վրաստանի հետ վարուիլ այն ձեւով, որ այսօր Ռուսիա կը վարուի», ըսած է ան թղթակիցներու:

Ռուսիա երկուշաբթի օր յայտարարած է, թէ Աճարիայէն վրացիներուն համար մուտքի արտօնագիրի պայմանները պիտի թեթեւցնէ:


Այս ձեւով, Աճարիոյ բնակիչները պիտի կարենան իրենց մուտքի արտօնագիրները ուղղակիօրէն Մոսկուայի օդակայաններէն առնել: Ռուսիա արդէն իսկ նման քայլեր առած է վրաստանի անջատողական 2 այլ շրջաններու՝ Աբխազիոյ եւ Հարաւային Օսեթիոյ գծով:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 113ԱՄԵԱԿ

Կը բանախօսեն՝
ԸՆԿ. ՅԱԿՈՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ԸՆԿ. ԱԼՊԵՐԹ ԱՃԵՄԵԱՆ

Տեղի կ'ունենայ Հիմզաքթի, 11 Դեկտեմբեր 2003,
երեկոյեան ժամը 8:00ին,
«Յակոբ Տէր Մեղիճեան» սրահին մէջ:

ԱՐՅԱԽԻ ԹԵՍԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՊԱՐԳԵՒ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ «ԱԶԳԱԿ»Ի ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ



Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսեան, ընկերակցութեամբ Միջին Արեւելքի մէջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցիչ Կարօ Քէպապճեանի, երէկ առաւօտուն այցելեց «Ազգակ»ի խմբագրատուն եւ հանդիպում մը ունեցաւ «Ազգակ»ի պատասխանատուներուն հետ՝ Արցախի այսօրուան իրավիճակին եւ հոգեւոր կեանքին մասին:

ՄՈՍԿՈՒՅԻ ՄԵՋ ...

Ռատիկանութիւնը ըսած է, թէ կը փնտռէ այլ կասկածելի մը, որ կրնայ մասնակցած ըլլալ յարձակումին եւ որ կովկասցիի կը նմանի, ինչ որ իշխանութիւններուն լեզուով կը նշանակէ, թէ գործողութիւնը կատարուած է չեչէն ըմբոսներու կողմէ:

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԶԵԼԼԱՅ

Միւս կողմէ, Կրեմլին իր խօսքին մէջ Փութին ըսած է, թէ որեւէ ծրագիր չունի սահմանադրութիւնը փոխելու:

Կիրակի օրուան ընտրութիւններուն, Կրեմլին ի նպատակով կողմնորոշուած կուսակցութիւնները 450 անդամնոց Տումային մէջ 316 արժող սպահոված են: Սահմանադրական մեծամասնութեան մը համար 301 քուէներ անհրաժեշտ են:

Կարգ մը մեկնաբաններ, ընտրութեանց նախօրեակին յայտնած էին, թէ Փութին այնքան կարեւոր մեծամասնութիւն կ'ուզէ ապահովել՝ սահմանադրական փոփոխութիւններու կարենալ ձեռնարկելու նպատակով, այնպիսի ձեռնով, որ կարելի ըլլայ իշխանութիւնը Կրեմլինի մէջ կեդրոնացնել, որպէսզի ինք 2008ին երրորդ նստաշրջանի մը թեկնածութիւն դնէ:

ՖՐԱՆՍԱՆ ԵՐԵՂ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՈՍԿՈՒՅԻ ՄԵՋ տեղի ունեցած անձնասպանական գործողութիւնը, վայն «սահաբեկչական արարք մը» նկատելով:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ ՊՐԻԻՔՍԵԼԻ ՄԵՋ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրիի թելադրանքով Պրիքսել այցելող իբրանանեան խորհրդարանական պատուիրակութիւնը երէկ հանդիպում մը ունեցաւ Եւրոպական Միութեան պատասխանատուներուն հետ:

Պատուիրակութիւնը անոնց ներկայացուց Լիբանանի պաշտօնական կեցուածքը, որ կը մերժէ պաղեստինցի գաղթականներու բնակեցման ծրագիրը:

Կը նախատեսուի, որ պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմեն երեսփոխաններ Պութրոս Հարպ, Մոհամէտ Քապպանի եւ Ալի Պեպլի, այսօր հանդիպում մը ունենան Պելճիքայի ծերակոյտի եւ խորհրդարանի նախագահներուն հետ:

ԴԱՍԱԽՕՄՆԵՐՈՒ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՅՈՅՅԸ՝ ՎԱՂԸ

Լիբանանեան Համալսարանի դասախօսներու լիկայի նախագահ Շարպէլ Քֆուրի երէկ կոչ ուղղեց բոլոր ուսուցիչներուն եւ ուսանողներուն՝ խիտ շարքերով մասնակցելու վաղուան ցոյցին: Ան ըսաւ, որ դասախօսները պիտի չկասեցնեն դասադուրը, մինչեւ որ կառավարութիւնը ընդառաջէ իրենց բոլոր պահանջներուն:

Միւս կողմէ, պետական երկրորդական վարժարաններու ուսուցիչները երէկ ամբողջական պորակցութիւն յայտնեցին Լիբանանեան Համալսարանի դասախօսներուն եւ շեշտեցին, որ պիտի մասնակցին վաղուան բողոքի ցոյցին:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ...

Ծարուցակուած Ա. Էջէն

կացութեան բարելաման իմաստով: Նախագահ Լահուտ կոչ ուղղեց Լիբանանով հետաքրքրուողներուն՝ անձամբ այցելելու Լիբանան եւ գործնապէս գնահատելու Լիբանանի կացութիւնը, առանց ականջ տալու միջազգային լրատուութեան ապատեղեկատուութեան:

Ան նկատել տուաւ, որ կառավարութիւնը յատուկ մարմին մը կազմած է հոգատարութիւն ցուցաբերելու յատկապէս արաբ ներդրողներուն նկատմամբ եւ դիրքորոշումներ ընծայելու անոնց:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ նաեւ, որ շրջանին մէջ խաղաղութեան հաստատումը պիտի օժանդակէ տնտեսական իրավիճակի կայունացման: Նախագահ Լահուտ իր խօսքը եզրափակեց ըսելով, որ մօտիկ ապագային Լիբանան իր դիրքը պիտի վերագրաւէ միջազգային բեմերու վրայ:

Շ. Յ. Դ. ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆԿ. ԸՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ...

Ծարուցակուած Ա. Էջէն

Ճայնական դաշինքին նպատակով: «Մենք այդտեղ ենք եւ որոշած ենք այդտեղ գտնուիլ, որպէսզի կարեւորութիւններ կատարելու հնարաւորութիւններ ստանալու շարք մը բացասական երեւոյթներու դէմ», ընդգծած է Մարգարեան, իբրեւ բացասական երեւոյթներու օրինակներ նշելով ա ղ ք ա տ ո թ ի ն ը , փտածութիւնը:

Ան դիտել տուաւ, որ կուսակցութիւնը տակաւին լիակատար հնարաւորութիւն չունի նպատակներու իրականացման համար: «Մենք պատասխանատու կը նկատուինք ամբողջ իշխանութեան մը համար, մինչդեռ մեր դերակատարութիւնը այդ իշխանութեան մէջ մասնակի է. տակաւին նոր կը փորձենք մեր ճիշտ ու ջանքով դերակատար ըլլալ: Այս մէկուն մենք ամբողջովին կը գիտակցինք», ըսաւ Հրանդ Մարգարեան:

Շ. Յ. Դ. Բիրոյի ներկայացուցիչը, անդրադառնալով երկրին մէջ քաղաքական մթնոլորտին, նաեւ կարեւոր նկատեց քաղաքական ուժերու միջեւ երկխօսութեան անհրաժեշտութիւնը: «Մենք թէ՛ անձնական օրինակով եւ թէ՛ այլապէս դրսեւորած մեր կեցուածքով միշտ քաջալերած ենք քաղաքական ուժերու, ինչպէս նաեւ իշխանութիւն-քաղաքական ուժեր երկխօսութիւնը, մտքերու փոխանակումը եւ իշխանութիւն-ժողովուրդ բաց ու թափանցիկ կապը եւ յարաբերութիւնները», յայտարարեց Հրանդ Մարգարեան:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ ԱԼԻ ԱՊՏԱԼԼԱՅԻ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Պէյրութի աւագ քննիչ դատախազ Հարթէմ Մատի երէկ ստորագրեց երկրագործութեան նախկին նախարար Ալի Ապտալլան ձերբակալելու հրամանագիրը՝ երկու ժամ հարցաքննութենէ ետք: Ապտալլա ամբաստանուած է երկրագործութեան մարզէն ներս լիբանանեամերիկեան գործակցութեան ծրագրի մշակման ընթացքին փտածութեան յանցանքով:

ԼՈՒՐԵՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԵՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրի երէկ կէսօրին գլխաւորեց խորհրդարանի գրասենեակի խորհուրդին ժողովը, որուն ներկայ գտնուեցան խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրպլի, երեսփոխաններ Անթուան Հատտատ եւ Ֆարիտ Խապէն, ինչպէս նաեւ խորհրդարանի ընդհանուր քարտուղար Ատնան Տահէր:

Ժողովին քննարկուեցան 15 եւ 16 Դեկտեմբերին գումարուելիք խորհրդարանի նիստին օրակարգը:

Ֆըրպլի նկատել տուաւ, որ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ հաղորդակցութիւններ ունեցած է Լիբանանեան Համալսարանի ուսուցիչներու լիկային կողմէ շարունակուող դասադուրին առնչութեամբ: Ան նկատել տուաւ, որ կարելի չէ նոյն ձեւով շարունակել անտարբերութիւնը Լիբանանեան Համալսարանի դասախօսներուն պահանջներուն նկատմամբ:

Ֆըրպլի աւելցուց, որ երեսփոխան Նիքոլա Ֆաթթուլի անձեռնմխելիութեան իրաւունքի շնչման մասին ոչ մէկ նամակ ստացած է արդարութեան նախարարութեան կողմէ:

Պրրի ընդունեց նաեւ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտը:

ՀՐԶՊԱԼԼԱ ԿԸ ՀԵՐՔԵ

Հրկապալա երէկ երեկոյեան հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ հերքեց, թէ Ղաժարի մէջ սպաննուած երկու անձանց օրերը անդամ են Հրկապալայի: Իսրայէլ յայտարարած էր, թէ իսրայէլեան ուժեր սպաննած են երկու պինեալներ, որոնք կը փորձէին լիբանանեան սահմանէն Իսրայէլ անցնիլ:

Միւս կողմէ, երէկ կէսօրուան ժամը 12:00ին իսրայէլեան օդանաւեր թռիչքներ կատարեցին հարաւային Լիբանանի Իքլիմ Թուֆաի շրջանին, ինչպէս նաեւ Ռաշայայի, Սուրի եւ Արեւմտեան Պէքայի վերել:

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

Սուրեն Թապագեանի մահուան Ա. տարելիցին առիթով, Թապագեան ընտանիք 55,000 Լ.ո.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ս. Յակոբ եկեղեցու Թաղական Խորհուրդը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ տր եւ տիկին Սագօ եւ Ռուբինա Սանտրիկի, տր եւ տիկին Անտրեսա եւ Անի Փամփանի Սանտրիկի եւ Եօթնի Ապաճեան-Սանտրիկի յիշատակը յաւերժացնելու համար յանձն առնելու երկու խաչքարերու բարեբարութիւնը երկու հազար հինգ հարիւր ամերիկեան տոլար արժողութեամբ:

ԹԱԳԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՅ

ԾԱԽՈՒ ՇՔԵՂ ՅԱՐԿԱՐԱԺԻՆՆԵՐ

●Անթիլիաս - Սգեղի սկիզբ: Ըն. 04- 523926:

ԸՍՍԱԶԳԱՅԻՆ ՈՒՐԲԵՆ ԶԱՐԿԱՐԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՂԻ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Կը ձեռնարկէ Դասական երաժշտական գրոյց հանդիպումներու շարքի մը Յատկանշական գործերու ունկնդրութեամբ եւ տեսաերկայնութիւններու ցուցադրութեամբ Ներկայացնող՝ Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլէճի Դասախօս ՊՐՆ. ՄԵԼԸՆ ՏԵՍԻՐՃԵԱՆ Հանդիպումի Գիւթ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԵՐ ԵՒ ՉԵՒ Երկուշաբթի, 15 Դեկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը 7:30ին, «Ազատամարտ» ակումբին մէջ (Էշնեֆիէ): ԸՆԴՈՒՄ. Հանդիպումները տեղի կ'ունենան երկշաբթեայ դրութեամբ: ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

TOSHIBA GET THE BIG PICTURE AT A SMALL PRICE THEATRE COOL HyperPro 100HZ TOSHIBA 43" PROJECTION TV \$1895+VAT TOSHIBA 50" PROJECTION TV \$2595+VAT UNILEC TEL: 04.718444

Հոգաւորութեամբ՝ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ (Առաջատար Լրբանան Հայոց Թեմ) Նախագահութեամբ՝ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԵՂԱՅՐՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ - ՎԱՃԱՌՔ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ Լուսաւորութեան ԹԱՇՏԵԱՆ Տասայթը պիտի տրամադրուի «Ազգակ»ին Բացման հանդիպումը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «ԱՂԱՆԵՆ»-Հ.Մ.Ը. մարզաշահութային համալիրի «Մեր Թոյմասեան» սրահին մէջ: ՀՐԱՒԻՐ Ծանօթ- Յուշահանդէս պիտի շարունակուի Ծաւաթ 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբեր 2003, կէսօր կը ժամը 4:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00

ԲԱՅՈՒՄ՝ ԱՖՇԻԼԻ ՆՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ

Երեկ երեկոյեան ժամը 6:00ին, Պուրճ Համուտի «Արին» կեդ-

չերեան, հայ կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխա-

մակերպութիւններու եւ միութիւններու ներկա-

լուծիւնը: Ուշագրաւ էր նախարար Խալիլի խօս-



Հասան Խալիլ

րոնի 4րդ յարկին մէջ պաշտօնական բացումը տեղի ունեցաւ ԱՅՇԻԼԻ Իրարօգնութեան Սնտուկի նոր գրասենեակին, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ երկրագործութեան եւ համագործակցականներու նախարար Ալի Հասան Խալիլի:

Ստուգուեցան Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խա-

չերեան, հայ կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխա-

մակերպութիւններու եւ միութիւններու ներկա-

լուծիւնը: Ուշագրաւ էր նախարար Խալիլի խօս-

քին մէջ հայութեան եւ մասնաւորապէս լիբանանահայ համայնքին մասին դրական արտայայտութիւնները: Իսկ խօսելով ԱՅՇԻԼԻ մասին ան ըսաւ, որ ԱՅՇԻԼԻ պէտք է օրինակ ծառայէ երկրի բոլոր համայնքներուն, որովհետեւ երկիրը կարիքը ունի այսպիսի հաստատութիւններու:

Բացման խօսքը կատարեց ԱՅՇԻԼԻ վարչութեան անդամ Յամիկ Նալպանտեան, որ հակիրճ խօսեցաւ ԱՅՇԻԼԻ առաքելութեան մասին:

Յ. Լատոյեան փոխանցեց ԱՅՇԻԼԻ Իրարօգնութեան Սնտուկի պաշտօնական խօսքը իբրեւ տնօրէն,

նրկայացնելով ԱՅՇԻԼԻ Իրագործած աշխատանքները եւ յառաջիկայ ծրագիրները:

Խօսք առին նաեւ «Մետնէթ» ապահովագրութեան ընկերութեան տնօրէն Ֆարիտ Բահուածի եւ նախարար Ալի Հասան Խալիլ, որոնք դրուատեցին ԱՅՇԻԼԻ Իրարօգնութեան Սնտուկի առաքե-



Յակոբ Լատոյեան



Քահուածի

Քահուածի, պատկան մարմիններու, ազգային կազ-

TOGETHER WE ARE STRONGER ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ



ԱՅՇԻԼ ԱՐԽԻԼ
Armenian Mutual Fund
Tel / Fax: 01 242556 - 242557

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 8:45 «Աստղեր»
- 9:00 «Ռատիօ-Թատրոն» կը ներկայացնեն Մարի Ռոզ Սանուկեան եւ Մանուէլ Մարգարեան
- 9:40 «Օրուան տոմար»
- 9:45 «Աստղիկ» կնոջական յայտագիր:

ԾԱԽՈՒ ՀՈՂ

●380 քառ. մետր Սար Եուսէֆ հիւանդանոցի դիմաց: Գին 145,000 \$: Հեռ. 01 / 566140:

ԿՈՒՉՈՒԻ

●Ոսկի փայլեցնող (ձիւլաձի) վարպետ մը: Դիմել՝ հեռ. 01- 242549:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱՌՈՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՕՏԱՐ ՊԱՐԵՐՈՒ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Պարոտայց **ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**
Փորձերը տեղի պիտի ունենան ամեն Հինգշաբթի, առաւօտեան ժամը 11:00ին, «Լեւոն Ծանթ» կեդրոնին մէջ:
Արձանագրութեան համար կարելի է դիմել մաե՛ հեռ. 03- 243248:
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԳԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՃԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ
Երկուշաբթի, 5 Յունուար 2004ի, երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ, **BIEL PAVILLON ROYAL** սրահին մէջ:

ԵՐԳԱՀԱՆԴԵՍ
Երեքշաբթի, 6 Յունուար 2004, երեկոյեան ժամը 7:30ին **UNESCO** սրահին մէջ:

ՏՈՍՏԵՐԸ ԿԸ ՎԱՏԱՌՈՒՄ
Obelix գրախանութ, Ալթիլիսա - Promenade Զալքա Գամազայիսի «Լեւոն Ծանթ» կեդրոն Գամազայիսի գրախանութ
Տիւրքոթեք Geka - Սթիւտիօ Վաչէ, Գաճըն:

ԻՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Ներքին ճակատի վրայ տիրող խաղաղութիւնը, նախագահ Լաիտուի ժընէ այցելութիւնը եւ Լիբանանեան համալսարանի դասախօսներուն կողմէ գործադրուած դասադուր կը հանդիսանան լիբանանեան օրաթերթերուն տեղական իրադարձութիւններուն առնչուող գլխաւոր լուրերը:

Երջանային եւ միջազգային լուրերու կարգին Գահիրէի մէջ քանակութիւններու ձախողութիւնը, ժընէ-ի նախաձեռնութեան առնչութեամբ շարունակուող կեցուածքները, իրաքեան իրադարձութիւնները եւ Ռուսիոյ խորհրդարանական ընտրութիւններ կը գրաւեն գլխաւոր դիրքերը:

«Սաֆիր»ի համաձայն, Ռուսիոյ մէջ կատարուած «ազատ եւ անպարկեշտ» ընտրութիւններուն նկատմամբ վերապահութիւններ յայտնեցին եւրոպական եւ ամերիկեան ղեկավարները, իսկ Փութին խաղաղ կերպով կը գործադրէ սահմանադրական յեղաշրջում մը:

«Տիւրք» նշած է, թէ Ռուսիոյ մէջ Փութին եւ ազգայնական կուսակցութիւնները մեծ յաղթանակ արձանագրեցին, իսկ Ռուսիոյ կողմէ, միջազգային կազմակերպութիւններ եւ Եւրոպա քննադատեցին ընտրութիւնները:

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՏԱԳՆԱՊ

«Սաֆիր» գրած է, թէ Իսրայէլի բարկութեան եւ Եւրոպայի անտարբերութեան լոյսին տակ, ապահովական պատի հարցը կը բարձրացուի միջազգային տեսանիւն: «Քիֆահ Արապի»ի համաձայն, Թէլ Աւի յայտարարած է, թէ Քոհնէյի օրերը համարուած են Գահիրէի երկիւստութեան ձախողութեան անջատելի մասը: Ապահովութեան ընդհանուր խորհուրդը ապահովութեան պատի հարցը կը փոխանցէ միջազգային տեսանիւն: «Լիուա» դիտել տուած է, թէ ապահովութեան պատի հարցը միջազգային տեսանիւնը կը վարչապետի միջամտմանը կախարարուի:

Երջանային եւ միջազգային լուրերու կարգին Գահիրէի մէջ քանակութիւններու ձախողութիւնը, ժընէ-ի նախաձեռնութեան առնչութեամբ շարունակուող կեցուածքները, իրաքեան իրադարձութիւնները եւ Ռուսիոյ խորհրդարանական ընտրութիւններ կը գրաւեն գլխաւոր դիրքերը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵԱՆՔ

«Նահար» օրաթերթը գրած է, թէ պետական պիտաձէի քննարկումները սկսան, սակայն ոչ լրջութեամբ, Ֆարժուշի հարցը պիտի հետապնդուի, իսկ Հինգշաբթի համալսարանի դասախօսներն ու ուսանողները ճամբայ պիտի իջնեն:

«Տիւրք»ի համաձայն, ներքին կեանքին վրայ կայունութիւնը կը տիրապետէ եւ մթնոլորտը բաւական հանդարտ է: Թապալար խորհրդը կը շարունակուի, ղիտել տուած է «Տիւրք»:

«Մուսթաքալ» նշած է, թէ վարչապետ Հարիրիի եւ նախարար ժընէի հետ հանդիպելէ ետք, ուսուցիչներու սենտիքան կը յետաձգէ վաղուան դասադուրը:

Ըստ «Լիուա»ի, Լիբանանեան համալսարանի դասախօսները հանդիպում պիտի ունենան վարչապետին հետ. պետական պիտաձէի քննարկման նախօրեակին միջազգային դրամատուրը կը վզուշացնէ Լիբանանը շուրջ 400 միլիոն տոլար կորսնցնելէ:

«Նախարար» խորհուրդը իր նիստը յետաձգեց 22 Դեկտեմբերին, որպէսզի շնորհաւորեն լիբանանցիները... Լիբանանեան համալսարանի դասախօսները Հինգշաբթի օր փողոց կ'իջնեն», գրած է «Անուար» օրաթերթը:

ՌՈՒՍԻԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐ

«Լիուա» գրած է, թէ ռուսական ընտրութիւնները մտահոգութիւն կը յառաջացնեն եւրոպական եւ ամերիկեան ղեկավարներուն մօտ:

ԻՐԱԳԵԱՆ ԻՐԱԿԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

«Քիֆահ Արապի» նշած է, թէ իրաքեան դատարաններ պիտի կազմուին միջազգային հսկողութեամբ, իսկ բռնագրաւող ուժեր երկու միլիառ տոլար կը գտնեն:

«Սաֆիր»ի համաձայն, ամերիկացի պիտուր մը եւ իրաքցի ոստիկան մը կը սպաննուին. բռնագրաւող ուժերը վանական շրջաններու մէջ բախումներ կը կատարեն:

«Լիուա» գրած է, թէ մօտ օրէն պիտի յայտարարուի իշխող խորհուրդի կազմը եւ իրաքի մէջ պատերազմի ռազմագործիւններու յատուկ դատարաններ պիտի ստեղծուին:

«Անուար» դիտել տուած է, թէ Աստուրիա յայտարարեց, որ Սատուա Հիւսէյն կորսնցուց իր օրինականութիւնը, իսկ Իստանբուլի միջազգային խորհուրդը կը խորհրդարանէ իր օրինականութեան աղբիւրը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԵՐԱՄԱՆԱՅԻՆ ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

«Սաֆիր» նշած է, թէ հակառակ կրօնական ճնշումներուն, Շիրաք կը փորձէ արգիլել լազակի գործածութիւնը ֆրանսական դպրոցներուն մէջ:

Ըստ թերթին, Եգիպտոս եւ Պրապիլ կ'ուզեն վերականգնել արաբական լատինական երկխօսութիւնը, իսկ Մուսթաքալ կը կ'ուղղէ Ռուսիոյ կողմէ քննարկուող Սուրիոյ հետ:

«Լիուա» գրած է, թէ Սէլուսական Արաբիոյ մէջ ոստիկանութեան հետ ունեցած բախումներուն ընթացքին 26 պահանջուած անձերէն մէկը սպաննուեցաւ:

«Մուսթաքալ»ի համաձայն, Եգիպտոսի նախագահը յայտնած է, թէ Միացեալ Նահանգներ պէտք է ընդառաջեն քանակութեան սկսելու սուրիական կոչերուն, որպէսզի կարելի ըլլայ բանակցիլ Իսրայէլի հետ:

Թերթը նշած է, թէ Իսրայէլ կը բրգոէ Պոլսը ընդդէմ Իրանի եւ Սուրիոյ, իսկ Գամազայի մէջ կը կայանայ սուրիական - թրքական հանդիպում մը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սիրիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան հովանաւորութեամբ, 2003 թ. Դեկտեմբերի 19ին, Դամասկոսի Ռուսական մշակութի կենտրոնի սրահում, երեկոյեան ժամը 8:30ին, տեղի կ'ունենայ համերգ, «Ռոբերտ Ամիրխանեանի երգերը» վերնագրով:
Համերգին կը մասնակցեն հանրայայտ կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանեանը եւ երգչուհի Սեդա Սարգսեանը:
09/12/2003թ.
ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԻ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Թուրքիա - Նիդերլանդներ

ԵՒՐՈՊԱՑԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻՆ ԿԸ ՓՈՐՁԵՆ ԶՐԿԵԼ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼՈՒ ԱՌԻԹԵՆ

Եվրոպական խորհուրդի խորհրդանական վեճաժողովի Բիւրոն յառաջիկային թեքելու քննարկի էլ եվրոպական խորհուրդի ղեկավարման լանդնոնյան անդամներուն առաջարկը, որ կը նախատեսէ նոյն լանդնոնյան անդամ, Ազրպէյճանի մասին գեկուցող Անտրէս Կրոսին թող չտայ եվրոպական խորհուրդին մէջ ներկայացնել Ազրպէյճանի մասին իր գեկուցումը, որ կը վերաբերի Ազրպէյճանին նախագահական ընտրութիւններէն ետք ստեղծուած իրավիճակին:



Անտրէս Կրոս

Ազրպէյճանական «Day.az» էլեկտրոնային լրատուամիջոցին համաձայն, այդ առաջարկին պատճառը «Գերմանական Այլթը» ձայնասփռուի կայանին Անտրէս Կրոսի տուած հարցազրոյցն է, որուն մէջ ան բաւական կոշտ դիրքորոշում ունեցած է Ազրպէյճանի իշխանութիւններուն նկատմամբ:

Հարցազրոյցին ընթացքին Կրոս կարծիք յայտնած էր, թէ վրաստանի ղեկավարը կ'աշխուժանէ նաեւ Ազրպէյճանի ընդհանուր իրավիճակը՝ երկրին մէջ ժողովրդավարութիւն հաստատելու համար: Այս մէկը պետական յեղաշրջման կոչ է Ազրպէյճանի ներքին գործերուն միջամտութիւն նկատուած է Պաքուի կողմէ:

Որոշ լրատուամիջոցներ նաեւ հարողոված են, որ Անտրէս Կրոս պիտի ներկայացնէ իր հրատարականքը, ինչ որ հերքուեցաւ եվրոպացի խորհրդարանականին կողմէ:

ԹՈՒՐՔԻԱ 1,34 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՆԻ ԿՆԱՍՈՒՑ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԿԻՊՐԱՑԻ ՅՈՅՆ ԿՆՈՋ

Եվրոպական խորհուրդին կողմէ պատճառական միջոցառումներուն առաջը առնելու նպատակով, տարիներու ձգտումներէ ետք, վերջերս Թուրքիոյ իշխանութիւնները կիրառեց յոյն թիթիւն Լոյզիտոսի յանձնեց 1,34 միլիոն տոյարի վնասուց հատուցում մը, 1974ի ներխուժումին ընթացքին անոր կալուածները բռնագրուելուն համար:

Մտրոկային իրաւանց եւրոպական ատեանին մէջ վճիռով, Թուրքիա պէտք է 1998ին վճարէր վնասուց հատուցումը, սակայն Անգարա փորձեց համոզել, թէ ոչ մէկ կապ ունի հարցին հետ, հակառակ այն իրողութեան, որ ենթական իր կալուածները կորսնցուցած էր թրքական ներխուժումին պատճառով:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը «անարդար եւ սխալ» որակեց եվրոպական ատեանին վճիռը, սակայն աւելցուց, թէ վնասուց հատուցումը վճարելով, Անգարա կարեւոր խոչընդոտ մը վերցուցած եղաւ Թուրքիա-Եւրոմիջին յարաբերութեանց մէջ շտեղծելու: Կիպրոսի թուրքերու ղեկավար Ռաուֆ Տենքթաշ «քաղաքական որոշում» որակեց ատեանին վճիռը:

ԱԶՐՊԵՅՃԱՆԸ՝ ԱՀԱԲԵԿԻԶՆԵՐՈՒ ՏԱՐԱՆՑԻԿ ԵՐԿԻՐ

Լաթվիոյ իրաւապահ մարմիններ մայրաքաղաք Ռիկայի մէջ ձերբակալած են 10 փաթիստանցիներ, որոնք ենթադրար կը ծրագրէին ահաբեկչական գործողութիւն մը կատարել պատեթիոյ միջազգային մրցումի մը մասնակցող իսրայէլեան խումբի մը ղեկ: Իրաւապահ մարմինները այժմ քննութիւն բացած են ահաբեկչական միջազգային կառույցներու հետ ձերբակալուած կասկածելիներու հաւանական առնչութեան շուրջ:

Համաձայն Լաթվիոյ սահմանապահ ծառայութեան մամուլը քարտուղարին, ձերբակալուած փաթիստանցիները պիտի արտաքուսին Ազրպէյճան, ուրկէ ժամանած էին Լաթվիա:

ՊԱՔՈՒ - ՃԵՅՇԱՆ ԲԱՐԻՒՂԱՏԱՐԸ ԿԸ ՅԱՌԱՋԴԻՍԵ ՄԵԾ ՌԻՍԲԵՐՈՎ

Դեկտեմբերին կենսոլորտի պաշտպաններու խումբեր պարկ տուին Պաքու-Թիֆլիս-ձէյխան քարիղատարին դէմ իրենց քարոզարշաւին: Խումբերէն մէկը յայտարարեց, թէ «Պարբէյպ» դրամատունը մերժած է փոխառութիւն կատարել այդ ծրագրին համար: Այդ լուրը լաւ էր ընդունուած կառավարութիւններուն վրայ, որպէսզի աւելի պզուշութեամբ հետեւին անոր իրագործման ընթացքին եւ ծախսին:

Գրամատան մերժումը գլխաւորաբար հիմնուած է ընկերային մտահոգութիւններու վրայ, որոնք կը վերաբերին շրջանի կենսոլորտին վրայ քարիղատարին ունենալիք ազդեցութեան:

Կան նաեւ քարիղատարին կառուցումը խաթարող քաղաքական հարցեր: 2 Նոյեմբերի խորհրդարանական ընտրութիւններէն ետք ստեղծուած քաղաքական խառնակ մթնոլորտին պատճառով, ներկայիս վրաստան կը շարունակէ ընդունել բերել կայուն նոր կառավարութիւն մը: Միւս կողմէ, կապած են իր կառավարութեան հետ իր իրաւունքները կը հաստատէ, թէ կառավարութիւնը ամբողջովին կը սատարէ այդ ծրագրին:

Նախկին նախագահ Էտուարտ Շեւարտնաձէի հրաժարումէն ետք, վրաստան ծրագրած է նախագահական ընտրութիւններ կազմակերպել 4 Յունուարին: Անկախ անկէ, թէ «Պարբէյպ» մերժեց վաղկտրամադրել ինչ որ սկզբունքներու հաւատարմութիւնը կամ անբաղաժի հետեւանքներ խու-

սափելու համար, անկայուն կառավարութեան հաստատութեան գոյութիւնը կրնայ դանդաղեցնել քարիղատարին վարգացման ընթացքը:

«Կը կարծեն, որ (Շեւարտնաձէի հրաժարումէն ետք) տեղի ունենալիք նախագահական եւ խորհրդարանական նոր ընտրութիւնները կրնան ուշացնել մեր կազմակերպական գործունէութիւնը», նշեց Ազրպէյճանի քարիղապետական ընկերութեան նախագահ Նաթիք Ալիեւ: Քարիղատարին կառուցումը ստանձնած ընկերակցութեան գլխաւոր «Պրիթշ Փեթրոլիում» ամերիկեան գլխաւոր մշտնի իրաւական վերահաստատեց իր նուիրումը վրաստանին եւ քարիղատարի ծրագրին: 28 Նոյեմբերին Ազրպէյճանի մէջ «Պրիթշ Փեթրոլիում»-ի գլխաւոր ներկայացուցիչ Տէյվիտ Ուոլտուրտ տեսակցութիւն ունեցաւ վրաստանի ժամանակաւոր կառավարութեան հետ: Գործող ղեկավար Նախագահ Նիւս Պուրաձանաձէին հետ տեսակցելէ ետք ան նշեց, թէ «մենք ուրախ ենք, որ նախագահը կը հաստատէ, թէ կառավարութիւնը ամբողջովին կը սատարէ այդ ծրագրին»:

Ուոլտուրտ աւելցուց, թէ «վերջին շաբաթներու ղեկավարութիւնը ոչ մէկ ձեւի պահելու չեն ունեցած աշխատանքներուն վրայ: Քարիղատարին կառուցումը կը շարունակուի: Վրաստանի մէջ քարիղատարին 35 առ հարիւրը արդէն կառուցուած է»: Ընդդիմութեան ղեկավար եւ նախագահական թեկնածու Միխայիլ Սահակաշվիլի չբերտեց իր հարցերը: «Վրաստանի մէջ ստորագրուած ռազմավարական բուստանքներու համաձայնագրի տարի մը նախքան ՄԵԽԻԻԹ ՔԱԹԸՔ Շարք՝ էջ 8

կը վերաբերի կասկեան քարիղատարին, գոյատեւման երաշխիքներ են վրաստանի համար», նշեց Սահակաշվիլի:

Պաքու-Թիֆլիս-ձէյխան քարիղատարին կառուցումը, բաւերկայ ժամանակացոյցին, պիտի աւարտի 2005ին, եւ «Պրիթշ Փեթրոլիում»-ին գլխաւորութեամբ Ազրպէյճանէն Թուրքիա բնական կապ հասցնելու կառավարի մը կառուցումը՝ 2006ին: Սակայն, երկու ծրագրներն ալ կը խանգարուին տրամաբանական քարիղատարին ու պատճառով: Պաքու-Թիֆլիս-ձէյխան քարիղատարին ընկերակցութիւնը կանխագուշակած էր, քարիղատարին 40 առ հարիւր աւարտած պիտի ըլլայ 1 Յունուարին, սակայն վրացական բաժինը որոշ ուշացումներ կը դիմագրաւէ կենսոլորտային եւ օրինական հարցերու պատճառով: 2 մեռնական եղանակը իր կարգին ուշացումի պատճառ պիտի հանդիսանայ: 27 Նոյեմբերին ընկերակցութիւնը յայտարարեց, թէ «մինչեւ 2003ի աւարտը, կառուցման ֆիզիքական աշխատանքին քառորդը աւարտած պիտի ըլլայ»: Ասիկա կը նշանակէ, որ նախկին կառուցութիւնները նուազած են:

Ծրագրին հետ առնչուած երեք երկիրները՝ Ազրպէյճան, Վրաստան եւ Թուրքիա, անհամբեր են ծրագրին աւարտին կապակցութեամբ: Թուրքիա եւ վրաստան մեծ բան կը պարտին միջազգային ղեկավարներուն, սակայն իրենց անկախ շարքը մեծապէս կ'օգնէ այդ գծով: Միջազգային ղեկավարներ մեծապէս հետաքրքրուած են նաեւ այդ ուշացումներուն ունենալիք քաղաքական հետեւանքներով: Երկու մեծ հիմնարկութիւններ՝ Համաշխարհային Կառուցումներու ՄԵԽԻԻԹ ՔԱԹԸՔ Շարք՝ էջ 8

ԹՈՒՐՔԻՈՅ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՊԱՔԱՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԻ



Էրպաքան

Թրքական ատեան մը 2 Դեկտեմբերին որոշեց 28 ամսուան բանտարկութեան դատապարտել իսլամ արմատական նախկին վարչապետ Նէճմէթին Էրպաքանը, որ 70 ալ իսլամականներու հետ ամբաստանուած էր իր կուսակցութեան գումարներէն 3,6 միլիոն տոյար շահագործելու յանցանքով:

Ըստ «Անատոլու» լրատու գործակալութեան, 77 ամեայ Էրպաքան իրաւունք ունի դատաւճիռը վերատեսուելու ենթակելու դիմում կատարելու:

Յիշեցնենք, թէ Էրպաքանի «Բարօրութիւն» կուսակցութիւնը արդէն իսկ ապօրինի հռչակուած է բանակին պարտադրած ճնշումներուն պատճառով: Ան նոյն ճնշումներուն տեղի տալով իշխանութեան հետագած էր 1997ի Յունիսին:

ԻՐԱՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ «ԿԸ ԲՈՆԱԲԱՐԵՆ» ԱԶՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՍՓՈՒՍԻ ԱՆՋՐՊԵՏԸ

Ազրպէյճանի պատկերասփռուի սփուլմի ալիքները վերջերս իրանական պատկերասփռուի կայաններուն կողմէ ենթարկուած են «յարձակման»: Ըստ ազրպէյճանական «էխօ» թերթին, «իրանական շարք կայաններ, ներառեալ տիրահոշակ «Մահար-2» կայանը, միաժամանակ սփուլմ են իրենց յայտարարները Ազրպէյճանի մէջ, երկար ժամեր շարունակ»:

Ազրպէյճանի հաղորդակցութեան նախարարութիւնը վերջերս յայտարարած էր, թէ իրանական «Մահար-1» եւ «Մահար-2» պատկերասփռուի կայաններէն պատաստարներ կը սպասուէին Ազրպէյճան, բանակցելու համար «Ազրպէյճանի մէջ իրանական անօրինական սփուլմին շուրջ»: Իրանցիները սակայն Պաքու չեն եկած:

Ըստ «էխօ»-ի, Ազրպէյճանի մէջ իրանական կայանները կը սփուլմ ձայնի եւ պատկերի լաւ որակով, այնպէս՝ ինչպէս տեղական կայանները:

ԱԶՐՊԵՅՃԱՆՑԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐ ՀԱՅԱԴՈՒԼԻ ԿԸ ԴԻՄԵՆ ԲԱՆՏԻՆ ՄԵՋ

Ազրպէյճանցի ձերբակալուած ընդդիմադիրները 2 Դեկտեմբերին հացադուլի ղեկավարութեամբ մէջ:

